



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 16 » 08 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0146-21

Ձեռնարկողը՝

«ԱՐՆԱՎԱՐ» ՍՊԸ

Շիրակի մարզ, ք. Գյումրի, Կ. Դեմիրճյան փ. 8-րդ նրբ. 22 պուն

Գործունեությունը՝ «Հեղնաջուր» ՓՀԷԿ-ի վերազինման աշխատանքների
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
զնահատման հայտ

Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող



Խ. Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ

0146-21

<16> 08 2021թ.

**«Հեղնաջուր» ՓՀԷԿ-ի վերազինման աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

«ԱՐՆԱՎԱՐ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Գործունեության տեսակը՝

«Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝

Շիրակի մարզ, Արփի համայնք

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 1)-ին կետի բ. ենթակետի՝ «հիդրոէկոտրակայաններ՝ 1-10 ՄՎտ հզորությամբ» «Հեղնաջուր» ՓՀԷԿ-ի վերազինումը դասակարգվում է «Գ» կատեգորիայի:

Նկարագրական մաս «Արնավար» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից շահագործվող «Հեղնաջուր» ՓՀԷԿ-ի կառույցները գտնվում են Շիրակի մարզի Արփի խոշորացված համայնքի Գառնառիճ բնակավայրի վարչական տարածքում: Ընկերության կողմից ՓՀԷԿ-ի համար օգտագործում է Արփի ջրամբար թափվող Հեղնաջուր վտակի ջրային ռեսուրսները: Գետն իրենից ներկայացնում է տիպիկ լեռնային գետ՝ ջրային ռեժիմի սեզոնային բնույթով և խառը սնուցումով՝ ձյան, անձրևի, գրունտային ջրերի տեսքով: Հեղնաջուր ՓՀԷԿ-ի գլխային կառուցվածքների հաշվարկային գետահատվածքում գետի ջրհավաք ավազանի մակերեսը 55 կմ² է, միջին բազմատարյա հոսքի նորմայի մեծությունը՝ 0.62 մ³/վրկ: Եղնաջուր գետը օգտագործվում է միայն ջրարբիացման համար, գետի ջուրը չի օգտագործվում խմելու կամ ոռոգման նպատակով:

Հեղնաջուր ՓՀԷԿ-ը դերիվացիոն տիպի է: Գետի 2185մ բարձրության նիշում կառուցվել է ջրընդունիչ հանգույցը, իսկ ծովի մակերևույթից 2050 մ բարձրության վրա Հեղնաջուր վտակի ափին կառուցվել է «Հեղնաջուր» ՓՀԷԿ-ի կայանային հանգույցը: Գլխամասային հանգույցից Եղնաջուր գետակի ջրերը ուղղվում են 1.0մ և 1.20մ տրամագծերով մետաղական ճնշումային խողովակաշարեր:

ՀԷԿ-ի ջրատնտեսական հաշվարկների և տեխնիկոտնտեսական հիմնավորումների համաձայն, 1.20մ³/վրկ առավելագույն հաշվարկային ելքով ՀԷԿ-ի շենքում տեղադրված Չեխական արտադրության «ՑԻՆԿ հիդրո» կազմակերպության հիդրոագրեգատով ներկայումս ապահովվում է 1230 կվտ դրվածքային հզորություն, տարեկան արտադրելով 4,05 մլն.կՎտ.ժ էլեկտրոէներգիա: Արտադրված էլեկտրաէներգիան «Արփի» ենթակայանի միջոցով միացված է էներգահամակարգին:

«Հեղնաջուր» ՓՀԷԿ-ը շահագործման համար ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 05.08.2009թ-ին, 15 տարի ժամկետով տրվել է N 0324 էլեկտրոէներգիայի արտադրության լիցենզիա, որի համաձայն մինչ օրս



շահագործվում է: ՓՀԷԿ-ի պահպանման և շահագործման համար ներգրավված է 8 մարդ, որից 5-ը Գառնառիճ համայնքի բնակիչներ են:

ՓՀԷԿ-ի ջրօգտագործումը և բնապահպանական թողքի բացթողման չափաքանակը $/0.03 \text{մ}^3/\text{վրկ}/$ սահմանվել է Բնապահպանության նախարարություն կողմից 27.11.2007թ-ին տրված N 1597 ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան:

Եղնաջուր գետի ջրաքանակի փոփոխությունների և պակասի պատճառով ներկայումս «Հեղնաջուր» ՓՀԷԿ-ը աշխատում է ցածր օգտատակար գործողության գործակցով՝ արդյունքում ունենալով էլեկտրաէներգիայի պակաս արտադրությանը և ջրային ռեսուրսի ոչ ռացիոնալ օգտագործման: Հաշվի առնելով վերջին տարիներին Հեղնաջուր գետում ջրաքանակի հնարավոր փոփոխությունները, «Հեղնաջուր» ՓՀԷԿ-ի բարձր տնտեսական շահավետություն ապահովելու և ջրային ռեսուրսի արդյունավետ օգտագործման նպատակով «Արնավար» ՍՊԸ ընկերության կողմից նախատեսվում է իրականացնել ՓՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ: Այդ նպատակի համար ՀԷԿ-ի շենքում նախատեսվում է տեղադրել փոքր հզորության երկրորդ հիդրոուժային սարքավորումը: Նախկին նախագծով ՀԷԿ-ի շենքը կառուցվել է երկրորդ ագրեգատ տեղադրելու հնարավորությամբ: Տեղադրվող ագրեգատը կմիացվի գործող ճնշումային խողովակաշահին:

Վերազինման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է գոյություն ունեցող ճնշումային խողովակաշարի ներքին մակերևույթի մաքրում և ներկում, գոյություն ունեցող հիդրոագրեգատի վերանորոգում, ինչպես նաև երկրորդ հիդրոագրեգատի տեղադրում՝ խողովակի անցկացումով: խողովակի տեղադրման համար շենքից 10մ հեռավորության վրա 700մմ տրամաչափի խողովակը միացվելու է գոյություն ունեցող՝ 1000մմ տրամաչափի ճնշումային խողովակաշարին /որն ունի կարգավորիչ փական/, որից հետո նոր տեղադրվող խողովակաշարի տրամագիծը կփոքրանա մինչև 600 մմ: Մինչև հիդրոուժային տուրբինին հասնելը խողովակի վրա նախատեսված է 600մմ փական՝ որով կկարգավորվի ջրի հոսքը դեպի տուրբին: Գոյություն ունեցող ճնշումային խողովակաշարը մինչև տուրբին հասնելը ևս կահավորված է փականով, որով կարգավորվում է ջրի հոսքը:

Նոր սարքավորումները ընկերությունը ձեռք կբերի Յինկ հիդրո կազմակերպությունից: որը չունի աշխատանքային բարձր ծայն և բացակայում է արտադրական որևէ տեսակի թափոններից: Վերազինման արդյունքում ընկերությունը օգտվելու է գործող ջրընդունիչից և ճնշումային խողովակաշարից և նախկինում տրված ջրօգտագործման թույլտվություն ջրային ծավալներից:

Վերազինման արդյունքում «Հեղնաջուր» ՓՀԷԿ-ը երկու ագրեգատների աշխատանքի արդյունքում կունենա հետևյալ ջրաէներգետիկ ցուցանիշները.

Դրվածքային հզորությունը՝ $N = 1380 \text{ կՎտ}$;

Հաշվարկային ելքը՝ $Q = 1.20 \text{ մ}^3/\text{վրկ}$;

Միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝ 4.45 մլն.կՎտ:

Առաջին հիդրոագրեգատի հիմնական պարամետրերն են

Դրվածքային հզորությունը՝ $N = 918 \text{ կՎտ}$;

Հաշվարկային ելքը՝ $Q = 0.80 \text{ մ}^3/\text{վրկ}$;

Միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝ 1,85 մլն.կՎտ.ժ:

Երկրորդ հիդրոագրեգատի հիմնական պարամետրերն են

Դրվածքային հզորությունը՝ $N = 462 \text{ կՎտ}$;

Հաշվարկային ելքը՝ $Q = 0.40 \text{ մ}^3/\text{վրկ}$;

Միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝ 2.60 մլն.կՎտ.ժ:



Նշված աշխատանքները իրականացնելիս որևէ բացասական ազդեցություն չեն ունենա շրջական միջավայրի և չի առաջացնի որևէ արտադրական թափոններ:

ՓՀԷԿ-ի վերազինման շինարարության աշխատանքները զգալի չեն և պայմանավորված են 10մ երկարությամբ խողովակաշարի անցկացման աշխատանքներով, դրանով պայմանավորված լանդշաֆտի ժամանակավոր խախտմամբ: Հանվող հողային զանգվածը առանց պահեստավորման, խողովակաշարը խրամուղում տեղադրելուց հետո կօգտագործվի տարածքի վերականգնման, կամ շրջակա տարածքների բարեկարգման համար: Բետոնային աշխատանքներն /ագրեգատի հիքերի բետոնացում և 5 մ ջրհեռացնող ջրանցքի կառուցում/ իրականացվելու են հիմնականում շենքի ներսում: Բետոնի պատրաստման համար հումքը (ցեմենտ ավազ) ձեռք է բերվելու համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություններից: Ներկման և հակակոռոզիոն աշխատանքների համար նախատեսված է համապատասխան թաղաթի օգտագործում՝ բացառելու նպատակով օգտագործող նյութերի թափանցումը հողի մեջ: Աշխատանքները ավարտելուց հետո օգտագործված նյութերի տարարները և տարածքը պաշտպանող թաղաթները կտեղադրվեն հատուկ տարաների մեջ և կտեղափոխվեն համապատասխան աղբավայր:

Հայտում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված՝ ՀԷԿ-ը սպասարկող անձնակազմի աշխատանքի անվտանգությանը և սանիտարական պայմանների ապահովմանը /ՀԷԿ-ը սպասարկող անձնակազմի սենյակում նախատեսվելով աղմուկի, ինչպես նաև թրթռման մակարդակի նվազեցման միջոցառումներ/:

Շահագործման փուլում բանեցված քսայուղը և տրանսֆորմատորային յուղը հատուկ տարողություններով սահմանված կարգով հեռացվում են:

Շահագործման փուլում, ջրային ռեսուրսների պահպանման հիմնական միջոցառում է հանդիսանում Հեղնաջուր գետում բնապահպանական թողքի չափաքանակի /0.03մ³/վրկ/ ապահովումը, ինչը սահմանված է նաև ջրօգտագործման թույլտվությամբ: Անկախ ՓԿԷԿ-ի ջրապահանջից, այդ ելքը միշտ պետք է առկա լինի գետի հունում, ապահովվելու համար տարվա բոլոր սեզոններին գետի ստորին հոսանքներում ջրային էկոհամակարգի կայունությունը:

Պայծառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Արփի համայնքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացավ հավանության: Քննարկումների ընթացքում Ընկերության տնօրենն իր պատրաստակամությունը հայտնեց՝ Արփի համայնքի համար սոցիալական ծրագրերի շարունակական իրականացմանը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Շիրակի մարզպետարանը, առողջապահության և արտակարգ իրավիճակների նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները ևս հաշվի են առնվել:

Այսպիսով, ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, կարելի է եզրահանգել, որ գործունեությունը չի առաջացնի լրացուցիչ բնապահպանական ծանրաբեռնվածություն Հեղնաջուր գետի էկոհամակարգի և շրջակա տարածքների վրա, քանի որ ՓՀԷԿ-ի համար օգտագործվող ջրաքանակը և պայմանները մնում է անփոփոխ: Ընկերության կողմից տեղադրվող «ՑԻՆԿ հիդրո» մակնիշի փոքր հզորության, ժամանակակից տեխնիկական պարամետրերով ագրեգատի /որը կարող է աշխատել քիչ ջրաքանակով/ աշխատանքի արդյունքում ՓՀԷԿ-ի օգտակար



գործողության գործակիցը կլինի բարձր և կապելանա տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը:

Փորձաքննական պահանջներ

1. ՓՀԷԿ-ի ջրօգտագործման պայմանների կատարումը հսկելու և ջրօգտագործման ծավալների հաշվառման համար անհրաժեշտ է ջրառի կետը ապահովել կապարակնքված ջրաչափով (հիմք ընդունելով ՀՀ ջրային օրենսգրքի 32-րդ հոդվածի պահանջները):

2. Շահագործման փուլում Հեղնաջուր գետի ձկնատեսակների, գետային էկոհամակարգի պահպանման և կայուն ջրօգտագործման նպատակով ՓՀԷԿ-ի ջրընդունիչ հանգույցում անհրաժեշտ է ապահովել բնապահպանական թողքի ավտոմատ կառավարման և առցանց վերահսկման ջրաչափական համակարգ՝ բնապահպանական թողքերի սահմանված չափաքանակները պահպանելու համար:

3. «Հեղնաջուր» ՓՀԷԿ-ի շահագործման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Առողջապահության նախարարի 2012 թվականի դեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

4. Շահագործման փուլում առաջացող թափոնների (տրանսֆորմատորային յուղ, բանեցված յուղեր, քսայուղեր և այլն) տեղադրումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան համաձայնեցումների առկայության դեպքում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՐՆԱՎԱՐ» ՍՊ ընկերության կողմից փորձաքննության ներկայացված «Հեղնաջուր» ՓՀԷԿ-ի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝  Հ. Մկրտչյան



Ընդամենը՝ 4 էջ